




Ի. ԱՏՎԼԻՆ

ԲՈԼՇԵՎԼԻԶՄԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ
ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ



ՊԵՏՎՐԱԾ — ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ 1938







ԳՐՈՒԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՁԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆ

Ի. ՍՏԱԼԻՆ

ՅԱՐ

ՏԱՐԱՎԱՐԱ Է 1961 թ.

ԲՈԼՇԵՎԻԿՈՒՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Խամակ «Пролетарская революция» ժուռնալի խմբագրույանը

1961



ԳԵՂԱՐՔԱՆ ՊԱՇԱԴՐԱՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1960

A II
6982

И. СТАЛИН
О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ
ИСТОРИИ БОЛЬШЕВИЗМА

Армгиз—Издательство
полит. литературы
Ереван, 1938

ՅՈՒՆԻՔԻՉԱՄԻ ԳԱՍՄԱԿԹՑԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Դամբակ „Արուելու քաղաքացին“ ժուռնալի
խմբագրությանը

Հարգելի ընկերներ:

Վճռականորեն բողոքում եմ Սլուցկու «Բոլշևիկները զերմանական սոցիալ-դեմոկրատիայի մասին նրա նախապատերազմյան ճգնաժամի շրջանում» հակակուստկցական ու կիռատոցկիստական հոդվածը «Պրոլետարական պայման» ժուռնալում (1930 թ. № 6) վրապես դիսկուսիոն հոդված զետեղելու դեմ:

Սլուցկին պնդում է, թե Լենինը (բոլշևիկները) թերագնահատում եր զերմանական ու ընդհանրապես նախապատերազմյան սոցիալ-դեմոկրատիայի մեջ յեղած ցենտրֆուլի վտանգը, այսինքն՝ թերագնահատում եր քողարկված ոպորտունիզմի վտանգը, ոպորտունիզմի հանդեպ հաշովվողականություն ցուցաբերելու վտանգը: Այլ կերպ ասած՝ բայ Սլուցկու դուրս ե գալիս, վոր Լենինը (բոլշևիկները) անհաշտ պայքար չեր մղում ոպորտունիզմի դեմ, վորովհետեւ ցենտրիզմի թերագնահատումն ըստ բանի եյության հրաժարումն և ոպորտունիզմի դեմ ծավալուն պայքար մղելուց: Այսպիսով դուրս ե գալիս, վոր Լենինը պատերազմին նախորդող ժամանակաշրջանում դեռևս իսկական բոլշևիկ չեր, վոր իմաստալիստական պատերազմի ժամանակաշրջանում միայն, կամ նույնիսկ այդ պատերազմի վերջերքին Լենինն իսկական բոլշևիկ դարձավ: Այսպես ե պատմում իր հոդվածում Սլուցկին: Խսկ դուք, փոխանակ նշանակելու այս նորահայտ «պատմաբանին» վրապես զրաբարաչի ու կեղծարարի, դիսկուսիայի յեք բանվում նրա հետ, նրան տրիբունա յեք տալիս: Չեմ կարող չբողոքել Սլուցկու հոդ-

վածը վորպես գիտակուսիոն հոգված ձեր ժուռնալում զետեղելու գեմ, վորովինեան չի կարելի գիտակուսիայի առարկա դարձնել Լենինի բալենիկության հարցը, այն հարցը, թե Լենինն ոկզբունքային անհաջող պայքար մղում եր արդյոք ցենտրիզմի՝ վորպես ոպրտունիզմի վորոշ տեսակի՝ գեմ, թե պայքար չեր մղում, Լենինն իսկական բոլշևիկ եր, թե այդպիսին չեր:

«Ծմբագրության կողմից» արած ձեր հայտարարության մեջ, վոր Կենտկոմ և ուղարկվել հոկտեմբերի 20-ին, դուք ընդունում եք, վոր խմբագրությունը սիսալ և թույլ տվել՝ զետեղելով Սլուցկու հոգվածը վորպես գիտակուսիոն հոգված։ Այդ, ինարկե, լավ ե, չնայած վոր խմբագրությանդ հայտարարությունը լույս և տեսնում մեծ ուշացումով։ Բայց դուք ձեր հայտարարության մեջ թույլ եք տալիս նոր սիսալ հայտարարելով, թե «Ծմբագրությունը քաղաքականապես ծայր աստիճանի ակտուալ ու անհրաժեշտ և համարում պրոբլեմների այն ամրող խմբի հետագա մշակումը՝ «Пролетарская революция»-ի եջերում, վորոնք կազմած են բոլշևիկների ու մինչպատերազմյան II Ինտերնացիոնալի փոխարարերության հետ»։ Այդ նշանակում ե, վոր դուք մտադիր եք մարդկանց նորից գիտկուսիայի մեջ ներքաշելու այն հորցերի վերաբերմամբ, վորոնք բոլշևիզմի աքսիոմանիքն են։ Այդ նշանակում ե, վոր Լենինի բոլշևիկության հարցը դուք նորից ուզում եք աքսիոմայից վերածել «հետագա մշակման» կարոտ մի պրոբլեմի։ Խոչժե, ի՞նչ հիման վրա Բոլորին հայտնի յի, վոր լենինիզմը ծընվել անել ու ամրացել և անսովոք պայքարում, ամեն յերանգի ոպորտունիզմի գեմ, այդ թվում ցենտրիզմի գեմ Արեմուտքում (Կառուցկի), ցենտրիզմի գեմ՝ մեզանում (Տրոցկի և ուրիշները)։ Այս չեն կարող ժխտել բոլշևիզմի մինչև անգամ ուղղակի թշնամիները։ Սա աքսիոմա յի։ Իսկ դուք մեզ քաշում եք վեպի հետ, փարձելով աքսիոման դարձնել «հետագա մշակման» յենթակա պրոբլեմ։ Խոչժե, ի՞նչ հիման վրա Գուցե բոլշևիզմի պատմության անձանոթ լինելու պատճառով։ Գուցե ի սեր փառ լիբերալիզմի, վորպեսի Սլուցկիները և Տրոցկու այլ աշա-

կերտները չկարողանան ասել, թե իրենց բերտնը փակում են: Բավական արքորդինակ լիբերալիզմ, վոր կերպավում և ի հաշիվ բոլշևիզմի կենսական շահերի...

Խմբագրությունն Սլուցկու հոգվածում խկազես ի՞նչն և դիսկուսիոն քննարկման արժանի համարում:

1) Սլուցկին պնդում ե, թե Լենինը (բոլշևիկները) գիծ չեր վարում գեղի խղում, գեղի պառակառում գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ուղղութունիստների հետ, մինչ պատերազմյան ժամանակաշրջանի II Ինտերնացիոնալի ուղղութունիստների հետ: Դուք ուզում եք դիսկուսիա մղել Սլուցկու այս արոցիկստական թեղիսի գեմ: Բայց այստեղ ի՞նչ դիսկուսիոն բան կա: Միթե պարզ չե, վոր Սլուցկին ուղղակի զրադարտում ե Լենինին, բոլշևիկներին: Զրադարտությունը հարկավոր ե նշավակել և վոչ թե դիսկուսիայի առաջկա դարձնել:

Ամեն մի բոլշևիկ, յեթե նա խկազես բոլշևիկ է, գիտե, վոր գենես պատերազմից շատ առաջ, մոտավորապես 1903—1904 թվականներից, յերբ Ռուսաստանում ձևավորվեց բոլշևիկների խումբը, և յերբ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ձախերն առաջին անգամ իրենց գոյությունն իմանալ տվին, — Լենինը գիծ եր վարում գեղի խղում, գեղի պառակտում ուղղութունիստների հետ թե մեզանում, ուռւսաստանյան սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ, թե այստեղ, II Ինտերնացիոնալում, մասնավորապես գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մեջ: Ամեն մի բոլշևիկ գիտե, վոր հենց այս պատճառով բոլշևիկներն արդեն այն ժամանակ (1903—1905) II Ինտերնացիոնալի ուղղութունիստների շարքերում «պառակախիչների» ու «կազմալուծիչների» պատվավոր հռչակ վաստակեցին: Բայց ի՞նչ կարող եր անել Լենինը, ի՞նչ կարող եյին անել բոլշևիկները, յեթե ձախ սոցիալ-դեմոկրատները II Ինտերնացիոնալում և, ամենից առաջ, գերմանական սոցիալ-դեմոկրատիայի մեջ թույլ ու անզոր մի խումբ եյին, կտղմակերպորեն չձևավորված, իդեոլոգիապես չկովված մի խումբ, վորը «խղում», «պառակտում» բառը նույնիսկ վահենում եր արտասանել: Հո չի կարելի պահանջել վոր-

պեսզի Անդրսը, վորպեսզի բոլշևիկները Ռուսաստանից ձախերի փոխարեն պառակտում սարքելին արևմտյան կուսակցություններում: Ել յեւ չեմ խոսում այն մասին, վոր կազմակերպական ու իդեոլոգիական թուլությունը ձախ սոց-զեմ: Բնորոշ զիծն եր վոչ միայն մինչպատերազմյան ժամանակաշրջանում: Դա, այդ բացասական զիծը, ինչպես հայտնի յեւ, ձախերը պահպանեցին նաև հետպատերազմյան ժամանակաշրջանում: Բոլորին հայտնի յեւ գերմանական ձախ սոց-զեմ: մասին արված գնահատականը Լենինի «Յունիուսի բրոյալը մասին»¹ հայտնի հոդվածում, վոր գրված և 1916 թվի հոկտեմբերին, այսինքն՝ պատերազմի սկզբից ամելի քան յերկու տարի անց, վորտեղ Լենինը քննադատելով ձախ սոց-զեմ: մի ամբողջ շարք լրջազույն քաղաքական սխալները Գերմանիայում, խոսում և «բոլոր զերմանական ձախերի բուլության մասին, վորոնց բոլոր կողմերից պատեղ և կառուցիւական կնդառվառության, պեղանեւրյան, ոպատունիսների նկատմամբ «ունեցած բարեկամափուրյան նօդիալի ցանցը», վորտեղ նա խոսում և այն մասին, վոր «Յունիուսը լիսվին չի ազատազրվել գերմանական, մինչև տեղամ ձախ սոցիսլ-դեմոկրատների, «միջավարից», վորոնց վախենում են պառակտությոց, վախենում են նեղափախական լոգանգիտեր լրիվ մինչև վերջն ասելուց»:

II Ինտերնացիոնալի բոլոր խմբավորումներից սուսական բոլշևիկներն այն ժամանակ միակ խմբավորումն ենին, վորն իր կազմակերպական փորձով ու իդեոլոգիական կոփվածությամբ ընդունակ եր ձևոնարկելու վորեն լուրջ քան՝ ուղղակի խզման, պառակտման իմաստով՝ իրենց ուղղանունիսների հետ իրենց ոռուսաստանյան սոցիսլ-դեմոկրատիայի մեջ: Այ, յեթե Սլուցկիները փորձ անեցին մինչև անդամ վաչ թե ապացուցելու, այլ պարզապես յենթադրելու, թե Լենինն ու ոռուսական բոլշևիկները չեն ողագործել իրենց ամբողջ հզորությունը, վորապես կազմակերպեն պառակտումն ոպորտունիստների հետ (Պլեխանով, Մարտով, Դան) ու վանդեն ցենտրալիստներին (Տրոցկի ու

¹ Յանիուսը Թողա Խուզսիմբուրդն և, ձախ սոց-զեմ: Արդեւ գերմանական սոցիսլ-դեմոկրատիայի մեջ:

Ոգոստոսյան բլոկի այլ կողմնակիցներ), ապա այն ժամանակ կարելի կլիներ վիճել էնինի բոլշևիկության մասին, բոլշևիկների բոլշևիզմի մասին: Բայց բանն ել հենց այն ե, վոր Սլուցկիները չեն համարձակվում մինչև անդամ ծպտուն հանել հոգուտ այլպիսի վայրենի յենթադրության: Զեն համարձակվում, վորովհետև գիտեն, վոր ոռւսական բոլշևիկների կողմից ամեն յերանդի ոպրորտունիստների հետ կառերը խզելու համար կիրառված (1904—1912 թ. թ.) վճռական քաղաքականության ամենքին հայտնի փաստերն աղաղակում են այլպիսի յենթադրության դեմ: Զեն համարձակվում, վորովհետև գիտեն, վոր իրենք մյուս որն եեթ անարդարքի սյունին կզամվին:

Բայց ահա մի հարց. ոռւսական բոլշևիկները կարող եյին արդյոք իրականացնել պառակտումն իրենց ոպրորտունիստների ու ցենտրիստահաշտվողականների հետ իմակերիալիստական պատերազմից շատ առաջ (1904—1912 թ. թ.)՝ դրա հետ մեկանդ գիծ չվարելով գեալի խղումը, գիծ գեալի պառակտումը II Ինտերնացիոնալի ոպրորտունիստների ու ցենտրիստների հետ: Ո՞վ կարող ե կառկածել այն մասին, վոր ոռւսական բոլշևիկներն ոպրորտունիստների ու ցենտրիստների նկատմամբ վարած իրենց քաղաքականությունը համարում եյին քաղաքականության տիպար Արևմուտքի ձախերի համար: Ո՞վ կարող ե կառկածել այն մասին, վոր ոռւսական բոլշևիկներն Արևմուտքի ձախ սոց-սեմոկրատներին, մասնավորապես գերմանական սոցիալ-գեմոկրատիայի ձախերին ամեն կերպ մղում եյին գեալի խղում, գեալի պառակտում իրենց ոպրորտունիստների ու ցենտրիստների հետ: Լենինին ու ոռւսական բոլշևիկների մեղքը չե, յեթի Արևմուտքի ձախ սոց-սեմոկրատ հասունացած գուրս չեկան այն բանի համար, վորպեսզի ոռւսական բոլշևիկների հետքերով գնան:

2) Սլուցկին կշտամբում ե լենինին ու բոլշևիկներին, վոր նրանք գերմանական սոց-սեմոկրատ, մեջ յեղած ձախերին չեյին աջակցում վճռաբար ու անդառնալի կերպով, վոր նրանք վերջիններին պաշտպանում եյին լուրջ վերապահություններով միայն, վոր Փրակցիոն նկատառությունները նրանց

իւանդարում եյին մինչև վերջն աջակցելու ձախերին: Դուք ուզում եք դիսկուսիա մղել այս շառատանական ու տեղովք կեղծ կշտամբանքի դեմ: Բայց այստեղ իսկապէս ի՞նչ դիսկուսիոն բան կա: Միթե պարզ չե, վոր Սլուցկին այստեղ մանհելում ե և ինինի ու բոլցեկների դեմ ուղղված կեղծ կշտամբանքով աշխատում ե քողարկել Գերմանիայի ձախերի դիրքի իսկական բացերը: Միթե պարզ չե, վոր բոլցեկները չեյին կարող աջակցել ձախերին Գերմանիայում, վորոնք նենց մի գլուխ տատանվում եյին բոլցեկների ու մինչեկդմի միջի՝ առանց լուրջ վերապահումների, առանց նրանց սխալների լուրջ քննադատության, չրավտնտեսելով բանվոր դասակարգին ու նրա հեղափոխությանը: Խարկացական մանյուլիները հարկավոր ե նշավակել և վոչ թե դիսկուսիայի առարկա գարձնել:

Այս, բոլցեկներն աջակցում եյին ձախ սոց-ռդեմ: Գերմանիայում միայն վորոշ լուրջ վերապահութներով քննադատելով նրանց կիսամենշեկնյան սխալները: Բայց որա համար հարկավոր ե նրանց վողջունել և վոչ թե կշտամբել:

Կան մարդիկ, վորոնք կասկածում են սրանում:

Դիմենք պատմության ամենից ավելի հայտնի փառակին:

ա) 1903 թվին լուրջ տարածայնություններ գրաւոր վեցին Ռուսացատանի բոլցեկների ու մինչեկների միջև կուսակցության անդամության հարցի առթիվ: Կուսակցության անդամության մասին իրենց ձևակերպումով բոլցեկներն ուղղում եյին կազմակերպական սանձ սահեծել վոչ-պրոկտարական տարրերի՝ կուսակցության ներսում հորդելու վեմ: Այդպիսի հորդման վտանգն այն ժամանակ ավելի քան սեալ եք ռուսական հեղափոխության բուրժուա-դեմոկրատական ընույթի շնորհիվ: Ռուսական մենշեկները հակառակ դիրք եյին պաշտպանում, վորը կուսակցության դռները լայնորեն բաց եր անում վոչ-պրոկտարական տարրերի առջև: Քանի վոր ռուսական հեղափոխության հարցերը կարևոր նշանակություն ունեյին համաշխարհային հեղափոխական շարժման համար, արևմտայելքուական սոցիալ-դեմոկրատները վճռեցին միջամտել

գործին: Միջամտեցին նաև Գերմանիայի ձախ սոցիալ-ռե-
մոկրատները՝ Պարվուսն ու Ռոզա Լուքսենբուրգը, ձախերի
այն ժամանակվա լիդերները: Յեղ թիւ: Նրանք յերկուուն
ել բոլշևիկներին դեմ արտահայտվեցին: Ընդումին ըոլշե-
վիկների հասցեյին մեղադրանք չպրոտիեց, թէ նրանք ուշ-
արացենտրալիստական ու ըլանկիստական աենդենցներ
ունեն: Հետազայում մենչևիկները վորդեղբեցին այդ գու-
ճիկ ու քաղքենիական նպիտեաներն ու տարածեցին ամ-
բողջ աշխարհով մեկ:

բ) 1905 թվին բոլշևիկների ու մենչևիկների միջև Ռու-
սաստանում տարածայնություններ ծավալեցին ոռուսական
հեղափոխության բնույթի շուրջը: Բոլշևիկները պաշտպա-
հում եյին բանվոր դասակարգի գաշխնքի գաղափարը գյու-
ղացիության հետ՝ պրոլետարիատի հեղեմոնիայի պայմա-
նով: Բոլշևիկները պնդում եյին, վոր գործը հարկավոր և
տանհի գեղի պրոլետարիատի ու գյուղացիության հեղա-
փոխական-դեմոկրատական դիկտատորան այն հաշվով,
վորպետվի բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից
անհապաղ անցում կատարվի դեպի սոցիալիստական հեղա-
փոխությունը՝ ապահովելով աջակցությունը գյուղի չքավո-
րության կողմից: Մենչևիկները Ռուսաստանում մերժում ե-
մին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության մեջ պրակ-
տարիատի հեղեմոնիայի գաղափարը, լիբերալ բուրժուազիա-
յի հետ համաձայնություն ունենալու քաղաքականությու-
նը նրանք գերազանցին բանվոր դասակարգի գյուղա-
ցիության հետ գաշխնք ունենալու քաղաքականությունից,
իսկ պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-
դեմոկրատական դիկտատորան հայտարարեցին հետագի-
մական ըլանկիստական սխեմա, վորը հակասում է բուր-
ժուական հեղափոխության զարգացմանը: Ի՞նչպես վերա-
բերվեցին այս վեճերին գերմանական սոցիալ-դեմոկրա-
տիայի ձախերը՝ Պարվուսն ու Ռոզա Լուքսենբուրգը:
Նրանք հնարեցին պերմանենու հեղափոխության ուսուպիա-
կան ու կիսամենշևիկյան սխեման (հեղափոխության մար-
քայան սխեմայի այլանդակ պատկերումը), վորն ամբողջո-
վին առգործված եր բանվոր դասակարգի ու գյուղացիու-

թյան դաշինքի քաղաքականության մենչեվկյան ժխտումով, և այս հակագրեցին պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտուտուրայի բոլշևիկյան սխեմային: Հետագայում Տրոցկին (մասամբ ել Մարտովը) վորդեզրեց պերմանենտ հեղափոխության այս կիսամեջնշեփկյան սխեման ու լինինիզմի դեմ պայքարելու դործիք դարձրեց:

գ) Պատերազմին նախորդած ժամանակաշրջանում Արևոտերնացիոնալի կուսակցություններում հրապարակ յեկավ, վորպես ամենաակտուալ հարցերից մեկը, ազգային-գաղութային հարցը, ճնշված ազգերի ու գաղութների ազատազրման հարցը, իմպերիալիզմի դեմ պայքարելու ուղիների հարցը, իմպերիալիզմի տապալման ուղիների հարցը: Պրոլետարական հեղափոխությունը ծավալելու և իմպերիալիզմը շրջապատելու շահերի տեսակետից՝ բոլշևիկներն առաջարկեցին ճնշված ազգերի ու գաղութների ազատազրական շարժմանն ազգերի ինքնորոշման բազայի վրա աջակցելու քաղաքականություն ու զարգացրին առաջավոր յերկրների պրոլետարական հեղափոխության և գաղութների ու ճնշված յերկրների ժողովուրդների հեղափոխական-ազատազրական շարժման միջև միասնական ճակատ ստեղծելու սխեման: Բոլոր յերկրների ոպորագունդատները, բոլոր յերկրների սոցիալ-շովինիստներն ու սոցիալ-իմպերիալիստները չհապաղեցին այս կապակցությամբ զինվելու բոլշևիկների դեմ: Բոլշևիկներին հալածում եյին ինչպես կատաղած շների: Այդ ժամանակ ինչ զերք բանեցին ձախ սոց-դեմ, Արեմուտքում: Նրանք զարգացրին իմպերիալիզմի կիսամեջնշեփկյան թեորիան, մերժեցին ազգերի ինքնորոշման սկզբանությունը նրա մարքսիստական ըմբռնմամբ (ընդհուպ մինչև անջատումն ու ինքնուրույն պետություններ կազմելը), բացարկեցին (օտելու) գաղութների ու ճնշված յերկրների ազատազրական շարժման լուրջ հեղափոխական նշանակության վերաբերյալ թեպիսը, բացարկեցին պրոլետարական հեղափոխության ու ազգային-ազատազրական շարժման միջև միասնական ճակատ ունենալու հնարավորության

գերաբերյալ թեղիսը և այդ ամբողջ կիսամենշեփեկյան շփոթը, վոր ազգային-գաղութային հարցի կատարյալ թերագնահատությունն ե, հակադրեցին բոլցեփեկների մարքսիստական ոխեմային Հայտնի յե, վոր հետո Տրոցկին վորդեգիր այդ կիսամենշեփեկյան շփոթը և այն ոգտազործեց վորպես պայքարի գործիք լինիսիզմի դեմ:

Սրանք են ձախ սոց.-դեմ. բոլորին հայտնի սխալները Դերժանիայում:

Ել յես չեմ խոսում գերմանական ձախերի մյուս սխալների մասին, վոր քննադատվել են Լենինի համապատասիան հոգվածներում:

Չեմ խոսում նույնպես այն սխալների մասին, վոր սրանք թույլ են տվել բոլշեփեկների՝ Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակաշրջանի քաղաքականությունը գնահատելիս:

Ինչի՞ մասին են խոսում գերմանական ձախերի այս սխալները, վորոնք առնված են մինչպատերազմյան ժամանակաշրջանի պատմությունից, յեթե վոչ այն մասին, վոր ձախ սոց.-դեմ., չնայած իրենց ձախությանը, դեռ չեն ազտագրվել մենշեփեկյան բազմժից:

Ի՞արեկի, ձախերը Գերմանիայում ունեյին վոչ միայն լուրջ սխալներ: Նրանք իրենց անցյալում ունեն հեղափոխական խողոր ու լուրջ զորքեր ևս: Յես նկատի ունեմ նրանց մատուցած մի ամբողջ շարք ձառայություններն ու նրանց մի ամբողջ շարք հեղափոխական յելույթները ներքին քաղաքականության ու մասնավորապես ընտրական պայքարի հարցերի առթիվ, պառամենտական ու արտապալամենտական պայքարի, ընդհանուր գործադուլի, պատերազմի, Ռուսաստանի 1905 թ. հեղափոխության և այլ հարցերի առթիվ: Բոլցեփեկներն ել նենց այս պատճառով եյին նրանց հետ վորպես ձախերի հետ հաշվի նստում ու աջակցում եյին նրանց, առաջ եյին մղում նրանց: Բայց սա չի վոչնչացնում ու չի կարող վոչնչացնել այն փաստը, վոր ձախ սոց.-դեմ. Գերմանիայում դրա հետ մեկտեղ իրենց անցյալում ունեյին մի ամբողջ շարք ամենալուրջ քաղաքական ու թերիական սխալներ, վոր նրանք դեռ չե-

յին, ապատվել մենշեիկայն բեռից ու այդ պատճառով կարիք ունեցին բոլշևիկների կողմից ամենալուրջ քննադաւառության:

Այժմ ինքներդ դատեցեք, արդյոք լենինն ու բոլշևիկները կարող եյին աջակցել Արևմուտքի ձախ սոց-պեմ. առանց լուրջ վերապահումների, տռանց նրանց սխալների լուրջ բնադրաբարյան՝ չգավաճանելով բանվոր դասակարգի շահերին, չգավաճանելով հեղափոխության շահերին, չգավաճանելով կոմունիզմին:

Պարզ չե՞ արդյոք, վոր Սլուցկին, կշտամբելով լենինին ու բոլշևիկներին այն բանի համար, վորի առթիվ նապետք ե վոր վողջուներ նրանց, յեթե ինքը բոլշևիկ լիներ,—մերկացնում ե իրեն մինչև վերջը՝ վորպես կիսամենշեիկի, վորպես գիմակավորված տրոցկիստի:

Սլուցկին յենթագրություն ե անում, թե լենինն ու բոլշևիկներն Արևմուտքի ձախների մասին իրենց տված վնահատականում յելնում եյին իրենց ֆրակցիոն նկատուուուուններից, թե, ասել ե, ոռոսական բոլշևիկները միջազգային հեղափոխության մեծ գործը զոհաբերում եյին իրենց ֆրակցիայի շահերին: Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր այդպիսի յենթագրությունից ավելի գուեհիկ ու նողկալի վոչինչ չի կարող լինել: Ավելի գուեհիկ վոչինչ չի կարող լինել փարովհետև մինչև անգամ մենշևիկների թվին պատկանող մերկապարանոց գուեհկաբաններն սկսում են հանկանաք վոր ոռոսական հեղափոխությունը ոռուների մասնավոր գործը չե, վոր նա, ընդհակառակը, ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի գործն ե, համաշխարհային պրոլետարական հեղափոխության գործը: Ավելի նողկալի վոչինչ չի կարող լինել, վորովհետև մինչև անգամ II ինտերնացիոնալին պատկանող պրոֆեսիոնալ զբարարարիչներն սկսում են հասկանաք վոր բոլշևիկների հետևողական ու մինչև վերջը հեղափոխական ինտերնացիոնալիզմի տիպար ե բոլոր յերկրների բանվորների համար:

Այս, ոռոսական բոլշևիկներն առաջին պլանն ելի՛ քաշում ոռոսական հեղափոխության տրմատական հարցերը,

ինչպիսիներն են՝ կուսակցության, դեպի բուրժուազիամուկրատական հեղափոխությունը մարքսիստների ունենալիք վերաբերմունքի, բանվոր գասակարգի ու գյուղացիության դաշնաքի, պրոլետարիատի հեգեմոնիայի, սպառամենատական ու արտապառամենտական պայքարի, ընդհանուր գործադրի, բուրժուազիմոկրատական հեղափոխության՝ սոցիալիստականի վերաճելու, պրոլետարիատի դիկտատորացի, իմպերիալիզմի, ազգերի ինքնորոշման, ձնշված ազգերի ու գաղութների ազատազրական շարժման, այդ շարժմանն աջակցելու քաղաքականության հարցերը և այլն նրանք առաջ եյին քաշում այս հարցերը վորպես փորձաքար, վորի վրա ստուգում եյին ձախ սոցիալ-գիմոկրատների հեղափոխական տոկունությունն Արևմուտքում. Արդյոք նրանք այդ բանն անելու իրավունք ունեյին: Այս, ունեյին: Վաչ միայն ունեյին, այլև պարտավոր եյին այդ ձևով վարվել: Նրանք պարտավոր եյին այդ ձևով վարվել վորովնետն այդ բոլոր հարցերը միաժամանակ համաշխարհային հեղափոխության արժատական հարցերն եյին, վորի խնդիրներին բոլշևիկները յենթարկում եյին իրենց քաղաքականությունը, իրենց տակտիկան: Նրանք պարտավոր եյին այդ ձևով վարվել, վորովնետն միայն այդպիսի հարցերով կարելի յեր ինչպես հարկն և ստուգիլ II հնտերնացիոնալի այս կամ այն խմբավորման հեղափոխականությունը: Հարց և ծագում. ել վորն և այստեղ ուժուական բոլշևիկների «Փրակցիոնականությունը» և Բնչ գործ ունեն այստեղ «Փրակցիոն» նկատառությունը:

Ենինը գետես 1902 թվին իր «Ի՞նչ անել» բրոշյուրում գրում եր, վոր «պատմությունը մեր առաջ այժմ դրել և մի մերձույթագույն խնդիր, վոր ամեն մի յերկրի պրոլետարիատի բոյոր մերձաւոր վորակ ու յն խնդիրներից ամենից ավելի նեղաւոր վորակ յանական, այլև ասխական ռեակցիայի ամենանկարագույթը, միայն յեկրապական, այլև ասխական ռեակցիայի ամենանկարագույթը, պատմությունը, —ուստական պրոլետարիատին կդարձներ միջազգային հեղափոխական պրոլետարիատի ավանդությունը: «Ի՞նչ անել» բրոշյուրի լույս տեսնելու ժամանակից անցել և 30 տարի: Վոչ վոք չի համարձակվել

ժիստել վոր անցքերն այդ ժամանակաշրջանում վայլուն կերպով հաստատեցին Լենինի խոռքերը: Բայց արդյոք սրանից չի հետևում, վոր ոռուական հեղափոխությունը յեղել ե (և մնում ե) համաշխարհային հեղափոխության հանգուցակետը, վոր ոռուական հեղափոխության արմատական հարցերը միաժամանակ հանդիսանում ենին (և այժմ ել հանգիստանում են) համաշխարհային հեղափոխության արմատական հարցերը:

Պարզ չե՞ արդյոք, վոր միմիայն այսպիսի արմատական հարցերով կարելի յեր իսկապես ստուգել ձախ և աղ, հեղափոխականությունն Արևմուտքում:

Պարզ չե՞ արդյոք, վոր այն մարդիկ, վորոնք այս հարցերը քննության են առնում վորպես «Փրակցիոն» հարցեր՝ մերկացնում են իրենց մինչև վերջը վորպես գոենկարաններ ու վերասերվածներ:

3) Սլուցկին պնդում է, թե դեռ չեն գոնվել բավարար քանակով պաշտոնական վավերագրեր, վորոնք վկայելիս լինելին Լենինի (բոլշևիկների) վճառական ու անհաջող պայքարի մասին ցհնարիկմի գեմ: Նա այս բյուրոկրատական թեղիսը գործ է ածում վորպես անժիստելի փաստարկ հոգուտ այն գրույթի, թե Լենինը (բոլշևիկները), հետևաբար, թերագնահատում եր Ա Խոտերնացիոնալում յեղած ցհնտրիդմի վասնգը: Դուք հանձն եք առնում դիսկուռիա մղել այս ցնդաբանության գեմ, այս ժուլիկական պատրիժակործության (կրյուկուրություն) գեմ: Բայց իսկապես ինչ դիսկուռիոն բան կա այստեղ: Միթե այնպես ել պարզ չե, վոր Սլուցկին վավերագրերի վերաբերյալ զրույցներով ջանում ե քողարկել իր այսպես կոչված՝ դիրքավորման վողորմելիությունն ու կեղծիքը:

Սլուցկին զոյություն ունեցող կուսակցական վավերագրերը բավական չե համարում: Ինչնե, ինչ հիման վրա: Միթե Ա Խոտերնացիոնալի գծով, ինչպես նաև ոռուաստանյան սոցիալ-դեմոկրատիայի ներկուռակցական պայքարի գծով յեղած բոլորին հայտնի վավերագրերը բավական չեն, վորպեսզի ամենայն պարզությամբ ցուցագրվի Լենինի ու բոլշևիկների հեղափոխական անհաջությունն ուղղուած:

Նիստների ու ցենտրիստների դեմ մղած նրանց պայքարում։
Սլուցկին առնառարակ ծանրթ և արդյոք այդ վավերագրե-
ւին։ Ել ի՞նչ փառաթթղթեր են հարկավոր նրան։

Ցենթրագրենք, թե գտնվեն, բացի արդեն հայտնի վա-
վերագրերից, մի կույտ այլ վավերագրեր, ասենք, բոլշևիկ-
ների բանաձեռք, վորոնք մի ավելորդ անդամ խոսում են
ցենտրիզմի վոչնշացման անհրաժեշտության մասին։ Արդյոք
այս նշանակում ե, վոր միմիայն թղթե վավերագրերի առ-
կայությունը բավական ե, վորպիսզի ցուցադրենք բոլշևիկ-
ների իսկական հեղափոխականությունն ու իսկական ան-
հաջողությունը ցենտրիզմի նկատմամբ։ Ել ավ, բացի
անհուսալի բյուրոկրատներից, կարող ե վատահել միմիայն
թղթե վավերագրերին։ Ել ավ, բացի արխիվային առնետ-
ներից, չի հասկանում; վոր կուսակցություններին ու լի-
գերներին հարկավոր ե ստուգել ամենից առաջ իրենց գու-
ծերով, և վոչ թե միայն իրենց գեկլարացիաներով։ Պատ-
մությունը քիչ սոցիալիստներ չի ճանաչում, վորոնք պատ-
րաստակամությամբ ստորագրում եյին ուզածդ հեղափոխա-
կան բանաձեռքը, վորպիսզի խուսափրվեն (օրոշակա-
կան ձանձնող քննադատներից։ Բայց այդ դեռ չի նշանակում,
թե նրանք այդ բանաձեռքը կիրառակ եյին կյանքում։ Ապա՝
պատմությունը քիչ սոցիալիստներ չի ճանաչում, վորոնք
փրփուը բերաններին պահանջում եյին այլ յերկրների
բանվորական կուսակցություններից հեղափոխական ամե-
նաթունդ գործողություններ։ Բայց այդ դեռ չի նշանակում,
թե նրանք իրենց սեփական կուսակցության մեջ կամ իրենց
սեփական յերկրում փաս չյին տեսում՝ իրենց սովորառու-
նիստների հանգեց, իրենց բուրժուազիայի հանգեց։ Արդյոք
լենինն այդ պատճառով չեր սովորեցնում մեզ հեղափոխա-
կան կուսակցությունները, հոսանքները, լիդերներին ստու-
գել վոչ թե նրանց գեկլարացիաներով, ու բանաձեռքով, այլ
նրանց գործերով։

Պարզ չե արդյոք, վոր յիթե Սլուցկին իսկապես ցան-
կանում էր ստուգել լենինի ու բոլշևիկների անհաջու-
թյունը դեպի ցենտրիզմն ունեցած նրանց վերաբերմունքի
մեջ, ուս իր հոգվածի հիմք պետք ե դարձներ վոչ թե

առանձին վավերագրերն ու յերկուշյերեք անձնական նամակներ, այլ բոլցիկների ստուգումը նրանց զարձերով, նրանց պատմությամբ, նրանց գործադրություններով։ Միթե մեզանում, սուսաստանյան սոցիալ-դեմոկրատիայի մեջ, չկային սպարտունիստներ, ցենտրիստներ։ Միթե բոլցիկները վճռական ու անհաջող պայքար չեյին մղում բոլոր այդ հոսանքների դեմ։ Միթե այդ հոսանքները թե գաղափարապես, թե կազմակերպողներն կապված չեյին Արևմտաքի ոպորտունիստների ու ցենտրիստների հետ։ Միթե բոլշևիկները ջարգութշուր չարին սպարտունիստներին ու ցենտրիստներին այնպես, ինչպես նրանց ջարգութշուր չեր արել աշխարհիս վոչ մի ձախ խումբ։ Ի՞նչպես կարելի յետք ամենից հետո առել, թե Լենինն ու բոլշևիկները թերագնահատում եյին ցենտրիզմի վանդպը։ Ինչու Սլուցկին արհամարեց այս փաստերը, փորսնք վճռողական նշանաւկություն ունեն բոլշևիկների բնութափրման համար։ Ինչու նա Լենինին ու բոլշևիկներին նրանց գործերով նրանց զործողություններով ստուգելու ամենից ավելի հուսալի մեթոդը չողագործեց։ Ինչու նա գերագասեց սպատահարար հավաքած թղթերը փորփրելու ավելի պակաս հուսալի մեթոդը։

Գորովինետն բոլշևիկներին նրանց գործերով ստուգելու ավելի հուսալի մեթոդին դիմելը մի ակնթարթում զլամիվայր շուռ կտար Սլուցկու ամրող գիրքավորումը։

Գորովինետն բոլշևիկներին իրենց գործերով ստուգելու ցույց կտար, վոր բոլշևիկներն աշխարհումը միակ հեղափոխական կազմակերպությունն են, վորը մինչև վերջը ջարգութշուր արեց սպարտունիստներին ու ցենտրիստներին և նրանց գուրս մանղեց կուսակցությունից։

Գորովինետն բոլշևիկների իսկական գործերին ու իսկական պատմությանը դիմելը ցույց կտար, վոր Սլուցկու ուսուցիչները—տրոցկիստները—այն գլխավոր ու նիմնական խումբն եյին, վորը նուսաստանում ցենտրիզմ եր արմատավորում և դրա համար հանձին Ազգաստայան բլոկի հատուկ կազմակերպությունն եր ստեղծել՝ վորպես ցենտրիզմի ոջախ։

Վորովինստեն բոլշևիկներին նրանց գործերով՝ ստուգելը
վերջնականապես կմերկացներ Սլուցկուն վորպես մեր կու-
սակցության պատմությունը խարդախողի, վորը փոքըում և
մինչավատերազմյան ժամանակաշրջանի տրոցկիզմի ցեն-
տրիզմը քողարկել ենինինի ու բոլշևիկների գեմ ուղղված
զրագրատական մեղադրանքներով, թե իրը նրանք թերա-
գնահատել են ցենտրիզմի վտանգը:

Ահա թե ինչպես ե, ընկեր խմբագիրներ, Սլուցկու և
նրա հոգվածի բանը:

Դուք տեսնում եք, վոր խմբագրությունդ սխալ ե գոր-
ծել՝ դիմկուսիա թուլլատրելով մեր կուսակցության պատ-
մությունը խարդախողի հետ:

Ե՞նչը կարող եր խմբագրությանդ մղել գեղի այդ սխալ
ուղին: Յես կարծում եմ, վոր նրան դեպի այդ ուղին մղել
և նեխած լիբերալիզմը, վորն այժմ վորոշ չափով տարած-
ված ե բոլշևիկների մի մասի մեջ: Բոլշևիկներից վոմանք
կարծում են, թե տրոցկիզմը կոմունիզմի մի ֆրակցիան ե,
ձիշտ և, սխալվոր քիչ հիմարություններ չանող, յերբեմն
մինչև իսկ հակախորհրդային, բայց և այնպես կոմունիզմի
ֆրակցիան: Սյատեկից՝ վորոշ լիբերալիզմ տրոցկիսաների
ու տրոցկիսառորդն մտածող մարդկանց նկատմամբ Հազիվ
թե հարկ կա ապացուցելու, վոր նման հայացքը տրոցկիզմի
նկատմամբ՝ խորապես սխալ ու նվառակար ե: Իրոք արաց-
կիզմն արդեն վաղուց զադարել ե կոմունիզմի ֆրակցիան
մինելուց: Իրոք տրոցկիզմն առաջավոր ջոկատն և հականե-
ղափոխական բուրժուազիայի, վորը պայքար ե մղում կո-
մունիզմի գեմ, խորհրդային իշխանության գեմ, ԽՍՀՄ-ում
ոսցիալիզմ կառուցելու գեմ:

Հականեղափոխական բուրժուազիային մվ ավեց բոլ-
շևիզմի գեմ ուղղված այնպիսի մի հոգմոր զենք, ինչպես
այն թեղիսը, թե սոցիալիզմի կասուցումը մեր յերկրում
անհնարին ե, ինչպես այն թեղիսը, թե բոլշևիկների վե-
րասերումն անխուսափելի յե և այլն: Այդ գենքը նրան
տրոցկիզմը տվեց: Զի կարելի պատահականություն համա-
րել այն փաստը, վոր բոլոր հակախորհրդային խմբավորում-
ները ԽՍՀՄ-ում խորհրդային իշխանության գեմ պայքա-

բելու անխոռափելիությունը հիմնավորելու վերաբերյալ
իրենց փորձերում վկայակոչում ենին տրոցկիզմի հայտնի
թեզիսը մեր յերկրում առցիւալիզմ կառուցելու անհնարինու-
թյան մասին, խորհրդային իշխանության վերասերման
անխոռափելիության մասին, կապիտալիզմին վերակառ-
նալու հավանականության մասին:

Հականեղափոխական բուրժուազիային ԽՍՀՄ-ում ով
տվեց տակտիկական զենք՝ խորհրդային իշխանության գեն
ուղղված բացահայտ յելույթների փորձերի ձևով: Այդ զենքը
նրան տվին տրոցկիստները, վորոնք փորձում ենին հակա-
խորհրդային ցուցեր սարքել Մասկվայում ու Լենինգրա-
դում 1927 թվի նոյեմբերի 7-ին: Սա փաստ է, վոր արոց-
կիստների հակախորհրդային յելույթները բարձրացրին
բուրժուազիայի վոգին ու սանձալուծեցին բուրժուական
մասնագետների վաստակը աշխատանքը:

Հականեղափոխական բուրժուազիային ով տվեց կազ-
մակերպական զենք՝ ընդհատակյա հակախորհրդային կազ-
մակերպություններ ստեղծելու փորձերի ձևով: Այդ զենքը
նրան տվին տրոցկիստները, վորոնք իրենց սեփական
հակաբոլշևիկյան անլեգալ խումբն ենին կազմակերպել: Սա
փաստ է, վոր արոցկիստների ընդհատակյա հակախորհրդա-
յին աշխատանքը հեշտացրեց հակախորհրդային խմբափո-
րումների կազմակերպական ձևավորումը ԽՍՀՄ-ում:

Տրոցկիզմը հականեղափոխական բուրժուազիայի առա-
ջավոր ջոկատն է:

Ահա թե ինչու լիբերալիզմը արոցկիզմի նկատմամբ,
թեկուղ և ջախջախված ու դիմակավորված տրոցկիզմի, քյալ-
ւազյողություն ե, վորը սահմանակցվաւմ է հանցագործու-
թյան հետ, բանվոր դատակարգին դավաճանելու հետ:

Ահա թե ինչու վորոշ «գրականագետների» ու «պատ-
մագետների» փորձերը՝ մաքունենգորեն մեր գրականության
մեջ ներքաշելու դիմակավորված արոցկիստական, հնոտին՝
պետք ե բոլցիկների կողմից վճռական հականարկածի
հանդիպեն:

Ահա թե ինչու չի կարելի արոցկիստական մաքունենգ-
ների հետ գրական գիտկուսիս թույլատրել:

Ինձ թվում ե, վոր տրոցկիստական մաքսանենգների կարգին պատկանող «պատմագետներն» ու «զբականագետները» ջանում են իրենց մաքսանենդ աշխատանքն անցկացնել առայժմ յերկու գծով:

Նախ՝ նրանք աշխատում են ապացուցել թե Անդինը պատերազմին նախորդած ժամանակաշրջանում թիրագնահատում եր ցենտրիզմի վտանգները ընդունին՝ անփորձ ընթերցողին և թողնվում կուհել վոր, հետևաբար, Անդին այն ժամանակ դեռևս իսկական հեղափոխական չեր, թե նա այդպիսին դարձավ լոկ պատերազմից հետո, այն բանից հետո, յերբ Տրոցկու ոգնությամբ «վերապինվեց»: Այս տեսակի մաքսանենգների տիպիկական ներկայացուցիչ կարելի յի համարել Սլուցկաւն: Մենք վերեւում տեսանք, վոր Սլուցկին և Ընկերությունը չարժեն, վոր նրանցով յիշկար զրադինք:

Եթերուրդ՝ նրանք աշխատում են ապացուցել, թե պատերազմին նախորդած ժամանակաշրջանում Անդինը չեր հականում բուրժուական-ողեմոկրատական հեղափոխության սոցիալիստական հեղափոխության վերաճելու անհրաժեշտությունը, ընդունին, անփորձ ընթերցողին և թողնվում կուհել վոր, հետևաբար, Անդին այն ժամանակ դեռևս իսկական բոլշևիկ չեր, վոր այդպիսի վերաճման անհրաժեշտությունը նա հասկացավ միայն պատերազմից հետո, այն բանից հետո, յերբ նա Տրոցկու ոգնությամբ «վերապինվեց»: Այս տեսակի մաքսանենգների տիպիկական ներկայացուցիչ կարելի յի համարել «Համեր(բ)կ պատմության գարնթաց»-ի հեղինակ Վոլոսելիչին: Ճիշտ ե, Անդինը գետն 1905 թվին գրում եր, վոր՝ «դեմոկրատական հեղափոխությունից մենք իսկայա և եր կակսենք անցնել, և նենց մեր ուժի համեմատ, զիտակից ու կողմանիւրաված պրոլետարիատի ուժի համեմատ, — կակսենք անցնել սոցիալիստական հեղափոխության», վոր՝ «մենք կողմանից ենք անբնդիա հեղափոխության», վոր՝ «մենք կանք չենք առնի կիսանամբին»: Ճիշտ ե, կարելի յեր նման կարգի բազմաբազում վաստեր ու վավերազրեր գտնել Անդինի յերկերում: Բայց Վոլոսելիչիներն ի՞նչ գործ ունեն Անդինի կյանքից ու գործունեյությունից տանկած վաս-

տեքի հետ: Վոլոսեվիչները դրում են, վորապեսղի, բոլշևիկյան գույնով՝ ներկվելով՝ իրենց հակալինինյան կոնտրաբանդը ներքաշեն, առեն բոլշևիկների հասցեյին ու խարդախեն բոլշևիկյան կուսակցության պատմությունը:

Դուք տեսնում եք, վոր Վոլոսեվիչներն արժեն Սլուցկիներին:

Սրանք են արոցկիստական մաքսանենդների «ուղիներն ու ողերաժանները»:

Ի՞նքներդ հասկանում եք, վոր խմբագրությանդ գործը չե հեշտացնել նման «պատմագիտաների» մաքսանենդային դոքունեյությունը՝ զիսկուսին արիբունա տրամադրելով նբանց:

Խմբագրությանդ խնդիրն, ըստիս, այն ե, վոր բոլշևիդամի պատմության հարցելով հասցնեք պատշաճ բարձրության, մեր կուսակցության պատմությունն ուսումնասիրելու գործը դնեք զիտական, բոլշևիկյան ուելուրի վրա և ուշադրությունը սրեք մեր կուսակցության պատմության արոցկիստական ու ամեն տեսակի այլ խարդախիչների գեմ՝ սիստեմատիկաբար պոկելով նրանց զիմաները:

Սա առավել ես անհրաժեշտ ե, քանի վոր մինչև իսկ մեր միջանի պատմագիտաները, — յս խոսում եմ անշատկա պատմագիտաների մասին, մեր կուսակցության բոլչենիկան պատմագիտաների մասին, — աղաս չեն այնպիսի սիալներից, վորոնք ջուր են լցնում Սլուցկիների ու Վոլոսեվիչների ջրագային: Այստեղ բացառություն չի կազմում, ցավոք որպի, նաև ընկ. Յարոսլավսկին, վորի Համկ(բ)կ պատմության վերաբերյալ զրքույկները, չսայած նրանց արժանիքներին, պարունակում են ոկրունքային ու պատմական բնույթի մի շարք սիալներ:

Կոմ. քարեփով՝ ի. Ստալին

«Пролетарская революция»
1931 թ. № 6 (113)



Խորագրեց Յ. Մորոխոսյան
Տէ՛հն, խմբ. Ա. Խոչշատրյան
Արքագրիչ Հ. Մանվելյան
Կոնտրոլ որբագրիչ Լ. Արավյան

Գլուխիսի վաղոր կ—3330 հըատ. № 614,
Գտավիկը № 163, ափրաժ 5.000
Հանձնվել և արտադրության 19/XI 1938 թ.
Արքագրվել և տպագրելու 4/XII 1938 թ.
Դինը 25 կ. կազմը 30 կ.

Գեղեցիկաց—Քաղաքական գրականության հրատարակչության տպարան,
Տէ՛հն, Ալավերդյան № 66









12295

Проз. 1940 г.

2. 15. 1

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0021310

597
—064пнч.
ԳԻՒՐ 55-1.

11
6982

И. СТАЛИН
О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ
ИСТОРИИ БОЛЬШЕВИЗМА

Армгиз—Издательство полит. литературы,
Ереван, 1938

17508.